ՆԱԽԱԳԻԾ58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<_____> 2011 ԹՎԱԿԱՆԻ N _____Ա

<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ> ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 37-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Պետական կառավարչական հիմնարկների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածներով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկի տնօրինությանը հանձնված <Ռաֆֆու անվան N36 հիմնական դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված Երևան քաղաքի Կոմիտաս 37 հասցեում գտնվող ուսումնական շենքի աջակողմյան թևի 2829.0 հազար դրամ արժողությամբ ու 527,7 քառ.մետր ընդհանուր մակերեսով երկրորդ հարկը / տարածքի փաստացի մակերեսի համար հիմք ընդունել սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված մակերեսը/ և նույն տարածքի հետնամասի բակային աստիճանավանդակը հետ վերցնել և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկին՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի <կրթության պետական տեսչություն> առանձնացված ստորաբաժանմանը տրամադրելու համար:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 13-ի <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով տարածք հանձնելու մասին> N 37-Ա որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին ՝ Երևանի քաղաքապետի հետ համաձայնեցված, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում , սահմանված կարգով, ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի հանձնման – ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը, այն իրականացնելով <Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկի միջոցների հաշվին:

Տեղեկանք հիմնավորում

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ> ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 37 -Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հունվարի 13-ի թիվ 37-Ա և 2007 թվականի փետրվարի 1-ի թիվ 105-Ա որոշումների համաձայն <Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ > պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված Երևան քաղաքի Ամիրյան 26 հասցեում գտնվող թիվ 2 ուսումնական մասնաշենքի առաջին հարկից 440 քառ.մետր տարածքը 10 տարի ժամկետով հանձնվել է <Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկին՝ այն կրթության պետական տեսչությանը տրամադրելու պայմանով:

Շենքը եռահարկ է և գոյության տասնամյակների ընթացքում նրանում գործունեություն են իրականացրել տարբեր կազմակերպություններ, որոնց կողմից ընդհանուր շենքային կապիտալ վերանորոգում երբևիցէ չի իրականացվել: Ներկայումս շենքի 2-րդ և 3-րդ հարկերը զբաղեցնում է «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամը: Ամիրյան փողոցից նշված շենքի մուտք տանող միակ հանապարհը նեղ փակուղին է: Հարևանությամբ գործող վերոնշյալ երկու կրթական հաստատություններն ունեն մեծաթիվ շահառուներ և այցելուներ, ինչի արդյունքում պարբերաբար առաջանում են տրանսպորտային խցանումներ, ստեղծելով ծառայողական դժվարություններ մեր աշխատակազմի, ինչպես նաև տեսչության այցելուների համար:

ՀՀ կրթության պետական տեսչությունն ամբողջությամբ զբաղեցնում է շենքի 1-ին հարկը՝ 8 աշխատասենյակով: Տեսուչների աշխատանքային պայմանները՝ աշխատասենյակներում նրանց հատկացված փոքր աշխատատարածքն ու այդ սահմանափակ տարածքում մեծաքանակ համակարգիչների առկայությունը չեն կարող բացասաբար չանդրադառնալ աշխատակիցների առողջության վրա: Արդյունքում ավելացել են տեսուչների կողմից առողջության հետ կապված խնդիրները:

Ընթացիկ իրավիճակը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսուչների աշխատանքի բնույթը խիստ անհատական

է և կրթական ոլորտի տարբեր ուղղություններով, միևնույն աշխատասենյակում տեսուչների գերխտությունը նվազեցնում է աշխատանքի արդյունավետությունն ու ազդում է ընդհանուր աշխատանքի որակի վրա:

Փայտյա են շենքի նկուղում գտնվող հենասյուները և միջհարկային ծածկերը:

Մշտապես ներծծվող գրունտային ջրերից շենքի հիմնական պատերի խոնավությունն ակնհայտ երևում է նրանց վրա աճած սնկերի և բորբոսի առկայությունից:

Շենքում սանհանգույցի տեղակայման վայրն ու այդ հատվածի առկա վիճակը լրացուցիչ անհարմարություններ է ստեղծում:

Շենքի անմիջական հարևանությամբ իրականացվում է երկու բարձրահարկ բազմաբնակարան շենքերի շինարարություն, որոնց սպասարկող շինարարական տեխնիկայի առաջացրած մշտական աղմուկն ու փոշին թույլ չեն տալիս ամռան տոթին բացել աշխատասենյակների պատուհանները, իսկ անձրևային օրերին շինհրապարակների ամբողջ ցեխն ավտոմեքենաների անվադողերի միջոցով տեղափոխվում է շենքի մուտքի առաջ:

Շենքին անմիջական կպած շինարարության հողային աշխատանքների իրականացումը թուլացրել է հիմնական կրող պատը և ստեղծել լուրջ վթարային իրավիճակ: Ներկայումս կոսմետիկ եղանակով ժամանակավորապես քողարկվել են առաջացած ճեղքերը, սակայն օր-օրի դրանք մեծանում են, փակելը դառնում է անիմաստ և փլվելու վտանգը մեծանում:

Բավարար չէ նաև աշխատասենյակների բնական լուսավորվածությունն ու ձմռան ամիսներին շենքի ջեռուցումը:

Կարգավորման նպատակը

Ի նկատի ունենալով վերնշված և հաշվի առնելով այն հանգամանքը, որ <Ռաֆֆու անվան N36 հիմնական դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված Երևան քաղաքի Կոմիտաս 37 հասցեում գտնվող ուսումնական շենքը լիարժեք չի օգտագործվում աշակերտների թվի պակաս լինելու պատճառով (առաջարկվող տարածքը գրեթե մշտապես օգտագործվել է այլ կազմակերպությունների կողմից), Հայաստան Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը գտնում է նպատակահարմար կազմակերպությանն ամրացված ուսումնական մասնաշենքի աջակողմյան թևի երկրորդ հարկը ամբողջությամբ տրամադրել տեսչությանը: Նշված տարածքն առանձնացված է հետնամասում գտնվող առանձին մուտքով:

Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող տարածքի կոսմետիկ վերանորոգումից հետո տեսչությունը կունենա ընդարձակ և լուսավոր աշխատատեղ: